ՀՀ արտաքին գործերի նախարարության

2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2022ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1 մարտ 2021 թ.

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ (2019-2021) ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը, հիմնվելով ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀ վարչապետի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշերի, հանձնարարականների վրա, 2019-2021թթ. շարունակել է աշխատանքներն՝ ուղղված Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, ազգային և պետական շահերի պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը, միջազգային ասպարեզում փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը, միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության խորացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաների ձեռքբերմանը և դեպի Հայաստան և Արցախ ներդրումային ծրագրերի նախաձեռնմանը:

Նշված ժամանակահատվածում ՀՀ արտաքին քաղաքականությունը ծավալվել է COVID-19 համավարակի, 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից՝ Թուրքիայի աջակցությամբ և միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ ՀՀ և Արցախի դեմ սանձազերծած լայնածավալ պատերազմի հետևանքով ձևավորված ճգնաժամի պայմաններում:

- **Արցախյան հակամարտության** կարգավորման հարցում Հայաստանը պահպանել է հավատարմությունը հիմնահարցի բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա լուծմանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ իրականացվող բանակցային գործընթացի շրջանակում:

2019թ. ջանքերն ուղղված են եղել հակամարտության կարգավորման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը՝ այդ թվում՝ հասարակությունների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորման միջոցով:

2019թ. հունիսի 28-ին ԿԽՄԿ միջնորդությամբ Հայաստանն ու Ադրբեջանը փոխանակել են 2019–ին մարտի 16-ին ՀՀ պետական սահմանն ապօրինի հատած Էլվին Արիֆ Օղլու Իբրահիմովին և 2017թ.-ի հունիսի 20-ին անհայտ պայմաններում Ադրբեջանի տարածքում հայտնված ՀՀ քաղաքացի Զավեն Կարապետյանին:

2019թ. նոյեմբերի 17-ից 21-ը տեղի է ունեցել Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի ԶԼՄ ներկայացուցիչների փոխանակման ծրագիրը: Ծրագիրն իրականացվել է բոլոր կողմերի ակտիվ մասնակցությամբ՝ կառավարությունների մակարդակով, ծրագրին լիարժեք մասնակցություն է ունեցել նաև Արցախը:

Ի հեճուկս գործադրված ջանքերի 2020թ. հուլիսի 12-ին Ադրբեջանը զինված բախում է սադրել հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում:

Սեպտեմբերի 27-ին Թուրքիայի օժանդակությամբ և ահաբեկչական խմբավորումների ներգրավմամբ Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ է սանձազերծել ՀՀ և Արցախի դեմ, որոնք դադարեցվել են **նոյեմբերի 9-ին** ՀՀ վարչապետի, ՌԴ և Ադրբեջանի նախագահների միջև ստորագրված հրադադարի հայտարարությամբ:

Պատերազմի հետևանքների վերացումը, Արցախի տարածքային ամբողջականության վերականգնումն ու կարգավիճակի հստակեցումը շարունակում են մնալ ՀՀ արտաքին քաղաքական գերակայություններ:

- Շարունակվել են աշխատանքները **Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ**:

2019թ. Ֆրանսիայի նախագահը ստորագրել է ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր ճանաչելու մասին հրամանագիր, նախաձեռնություններ և բանաձևեր են ընդունվել Իտալիայի Պատգամավորների պալատի, Պորտուգալիայի խորհրդարանի, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի, ԱՄՆ Սենատի կողմից:

2020թ. փետրվարի 13-ին Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովն ընդունել է Օսմանյան կայսրության կողմից իրականացված՝ հայ ժողովրդի ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ բանաձև:

- Հայաստանը շարունակել է ամրապնդել և խորացնել ռազմավարական դաշնակցային հարաբերությունները **Ռուսաստանի Դաշնության** հետ, ինչին նպաստել են երկու երկրների բարձրագույն ղեկավարության միջև հանդիպումները: Մասնավորապես, ակտիվ փոխգործակցություն է ծավալվել ռազմական, տնտեսական, հումանիտար, միջխորհրդարանական կապերի և ապակենտրոնացված համագործակցության զարգացման ուղղությամբ:

- **ԱՄՆ** հետ բարեկամական գործընկերության զարգացումը կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում: Պահպանվել է ԱՄՆ հետ տարբեր մակարդակներում ակտիվ երկխոսությունը: 2019թ. Երևանում տեղի է ունեցել հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության անդրանիկ նիստը: 2019թ. սեպտեմբերի 24-ին ԱԳ նախարար Մնացականյանը և Կալիֆորնիայի նահանգապետ Նյուսըմը Նյու Յորքում ստորագրել են Հայաստան-Կալիֆորնիա շրջանակային համաձայնագիրը:

2020թ. ԱՄՆ շուրջ 34 մլն. ԱՄՆ դոլար աջակցություն է տրամադրել ՀՀ-ին: Միացյալ Նահանգները նշյալ աջակցությունից բացի շուրջ 8 մլն. ԱՄՆ դոլար տրամադել է Հայաստանին՝ COVID-19 համավարակի հետևանքները մեղմելու համար: Արցախյան պատերազմի համատեքստում ԱՄՆ կառավարությունը ԿԽՄԿ միջոցով ևս 10 մլն. ԱՄՆ դոլար է տրամադրել հումանիտար ճգնաժամը հաղթահարելու համար:

2020թ. սեպտեմբերին առցանց եղանակով կայացել է ՀՀ-ԱՄՆ միջև Առևտրի ու ներդրումների շրջանակային համաձայնագրի (TIFA) խորհրդի հերթական նիստը:

- Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հայաստանի և **Եվրոպական Միության** միջև: Երկուստեք վերահաստատվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում Հայաստան-ԵՄ համապարփակ համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու հանձնառությունը:

2021թ. փետրվարի 10-ին Եվրոպական միությունը ծանուցել է ՀՀ կառավարությանը՝ ԵՄ և ԵՄ անդամ երկրների կողմից ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացման գործընթացի ավարտի մասին: Համաձայնագիրը լիարժեքորեն ուժի մեջ է մտնում ս.թ. մարտի 1-ից:

2019թ. ԱԳ նախարարը մասնակցել է ԱլԳ 10-ամյակին նվիրված մի շարք միջոցառումների: Հունիսին կայացել է Հայաստան-ԵՄ գործընկերության երկրորդ նիստը, որը նախագահել են ՀՀ ԱԳ նախարարը և ԵՄ Բարձր ներկայացուցիչ Մոգերինին: 2019թ. զգալի աճել է ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական աջակցությունը. 2019թ. տարեկան գործողությունների ծրագրով նախատեսված 40 մլն եվրոյի չափով աջակցությանը հավելվել է լրացուցիչ 25 մլն եվրո հովանոցային ֆոնդից:

2020թ. COVID-19-ի դեմ պայքարի և դրա հետևանքների վերացման նպատակով ԵՄ-ն 98,5 մլն եվրո աջակցություն է տրամադրել ՀՀ-ին:

- Շարունակվել են եվրոպական երկրների հետ՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և այլ, երկկողմ գործընկերային կապերի զարգացման ուղղությամբ աշխատանքները: 2019թ. ՀՀ ԱԳ նախարարի Կիպրոս և Հունաստան կատարած այցերի արդյունքում ձևավորվել է **Կիպրոս-Հայաստան-Հունաստան** համագործակցության եռակողմ ձևաչափը:
- 2019թ. **Սլովակիան, Սերբիան** և **Նիդերլանդները** Երևանում դիվանագիտական ներկայացուցչություններ բացելու որոշումներ են կայացրել:
- Ակտիվ աշխատանքներ են իրականացվել հարևան պետությունների՝ **Վրաստանի և Իրանի** հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու ուղղությամբ: 2019թ. բարձրաստիճան մի շարք փոխայցելությունների շնորհիվ ակտիվ քաղաքական երկխոսությունն ակտիվացել է ՀՀ և Վրաստանի միջև:

- Աշխատանքներ են իրականացվել **ասիական տարածաշրջանի**՝ հատկապես Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ համագործակցության խորացման ուղղությամբ: 2019թ. ուժի մեջ են մտել Հայաստանի և Ճապոնիայի, ինչպես նաև Հայաստանի և Կորեայի Հանրապետության միջև «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրերը:

- Ուշադրության կենտրոնում են եղել զարգացումներն **արաբական աշխարհում**: Օրակարգում շարունակել են առանցքային տեղ զբաղեցնել սիրիահայության անվտանգության, Սիրիայի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերը: 2019թ. փետրվարից Սիրիայում գործում է հայկական մարդասիրական առաքելությունը, որը նպատակ ունի օժանդակություն ցուցաբերել հումանիտար ծանր վիճակում հայտնված մեր հայրենակիցներին և սիրիացի բարեկամ ժողովրդին: Այդ նպատակով Հայաստանը համագործակցում է նաև ՄԱԿ հովանու ներքո Սիրիայում մարդասիրական գործունեություն ծավալող միջազգային կառույցների և Սիրիայի իշխանությունների հետ:

- 2019թ. **Կատարի Պետությունում** բացվել է ՀՀ դեսպանություն և նշանակվել է ռեզիդենտ դեսպան:

- 2020թ. փետրվարից սկսել է գործել Իսրայելում ՀՀ դեսպանությունը, իսկ նոյեմբերից՝ Էրբիլում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

- Շարունակվել են **Ամերիկյան մայրցամաքի** պետությունների հետ՝ Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա, Ուրուգվայ և այլ, համագործակցության խորացման ուղղությամբ աշխատանքները: 2019թ. հունիսի 14-ին տեղի է ունեցել Հայաստանում **Մեքսիկական Միացյալ Նահանգների** պատվո հյուպատոսի գրասենյակի բացման հանդիսավոր արարողությունը, իսկ դեկտեմբերի 5-ին՝ **Չիլիի** պատվո հյուպատոսի գրասենյակի: **Ուրուգվայի** արտաքին հարաբերությունների նախարարի այցի շրջանակում՝ 2019թ. օգոստոսի 16-ին Երևանում պաշտոնապես բացվել է Ուրուգվայի գլխավոր հյուպատոսությունը:

- Քայլեր են ձեռնարկվել դիվանագիտական կապերի աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ, հատկապես **ասիական և աֆրիկյան** ուղղություններով: 2020թ. հունվարից սկսել է գործել **Եթովպիայում** ՀՀ դեսպանությունը: Նպատակ ունենալով զարգացնել Մաղրիբի երկրների հետ հարաբերությունները՝ Հայաստանը ոչ ռեզիդենտ դեսպան է հավատարմագրել **Թունիսում** և **Մարոկկոյում** (նստավայրը՝ Երևան):

- Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը **ԱՊՀ** շրջանակներում իրականացվող փոխգործակցությանը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի խորացմանը:

- Հայաստանն ակտիվորեն ներգրավված է եղել **ԵԱՏՄ** շրջանակներում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներին: ՀՀ վարչապետի նախագահությամբ 2019թ. կայացել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի երեք նիստ: Հայաստանի

նախագահության ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվել Միության՝ երրորդ երկրների հետ համագործակցության խորացմանը: **Հոկտեմբերի 1-ին** բարձրագույն խորհրդի երևանյան նիստին ԵԱՏՄ անդամ երկրների հետ մեկտեղ մասնակցել են **Սինգապուրի, Իրանի** և **Մոլդովայի** ղեկավարները: Նիստում ստորագրվել են Շրջանակային համաձայնագիր տնտեսական համագործակցության մասին և համաձայնագիր՝ Եվրասիական տնտեսական միության, նրա անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին: 2019 հոկտեմբերի 27-ին ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Իրանի միջև ազատ առևտրի գոտու ստեղծմանը միտված ժամանակավոր համաձայնագիրը:

2020թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը մասնակցել է **Եվրասիական Բարձրագույն տնտեսական խորհրդի**՝ տեսակապի ձևաչափով կայացած նիստին, որի ընթացքում առանցքային քննարկման առարկա են հանդիսացել ԵԱՏՄ ընդհանուր գազի շուկայի ձևավորման առաջին փուլի շրջանակում Հանձնաժողովի և անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից կատարված աշխատանքները, ընդգծվել է երկրորդ փուլի մեկնարկի կարևորությունը:

- **Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության** շրջանակներում Հայաստանը շարունակել է հանդես գալ կառույցի առավել ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով: Մասնավորապես քայլեր է ձեռնարկել կազմակերպության արդյունավետության բարձրացման, ՀԱՊԿ պետությունների կողմից միմյանց հանդեպ դաշնակցային պարտավորությունների կատարումը ապահովելու, կազմակերպության նորմատիվ իրավական հենքի բացը լրացնելու ուղղությամբ:

- ՀՀ շարունակել է խորացնել ներգրավվածությունը **Միավորված ազգերի կազմակերպության** կառույցներում: 2019թ. մարտի 22-ին Հայաստանը ստանձնել է **ՄԱԿ Կանանց կարգավիճակով հանձնաժողովի (CSW)** նախագահությունը: Հոկտեմբերի 17-ին Հայաստանն ընտրվել է **Մարդու իրավունքների խորհրդի** անդամ՝ 2020-2022թթ. ժամանակահատվածի համար:

Շարունակվել են աշխատանքները մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ: 2019թ. ԱԳ նախարարը մասնակցել է Ռուանդայի ցեղասպանության 25-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին: Դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան միաձայն ընդունել է հուլիսի 20-ը Շախմատի համաշխարհային օր հռչակելու մասին Հայաստանի նախաձեռնած բանաձևը:

Դեկտեմբերի 11-ին «Հայկական տառարվեստը և դրա մշակութային դրսևորումները» ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

2020թ. հունիսի 22-ին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված Ցեղասպանության կանխարգելում բանաձևը (Resolution on prevention of genocide):

Հայաստանում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման <u>Ազգային կամավոր գնահատման երկրորդ զեկույցի</u> ներկայացում

2020 թ. հուլիսի 10-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո առցանց ձևաչափով բարձր մակարդակի քաղաքական ֆորումի ընթացքում Հայաստանը ներկայացրել է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման <u>Ազգային կամավոր գնահատման երկրորդ զեկույցը</u>: Ֆորումը 2020թ.-ին կրել է «Արագացված գործողության և վերափոխման ուղիներ. Գործողությունների տասնամյակի իրականացումը և կայուն զարգացման ապահովումը» (“Accelerated action and transformative pathways: realizing the decade of action and delivery for sustainable development”) խորագիրը:

ՀՀ գնահատման զեկույցն արտացոլում է Հայաստանում 2018 թ.-ից ի վեր Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրականացմանն ուղղված քայլերը, ՀՀ կողմից արձանագրված հաջողությունները, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարմանն ուղղված նորարարական լուծումները:

2020թ. ապրիլի 22-ին ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման նպատակների խորհրդի» մասին ՀՀ վարչապետի N 479-Ա որոշումը**: ԿԶՆ խորհուրդը ղեկավարում է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Նոր խորհուրդն ունի ավելի լայն մանդատ և իր կազմով ավելի ընդգրկուն է:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված մրցույթի արդյունքում **7 ոլորտներում գործող ՀԿ-ներ ներգրավվել են ԿԶՆ խորհրդում:**

- Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը **ԵԱՀԿ** գործունեության բոլոր երեք հարթություններում (ռազմաքաղաքական, տնտեսական-բնապահպանական և մարդու իրավունքների): Արցախի դեմ սանձազերծված պատերազմի առաջին իսկ օրից **ԵԱՀԿ Մշտական խորհրդում** ՀՀ պատվիրակությունը պարբերաբար բարձրացրել է «Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեջանի՝ Թուրքիայի և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ուղղակի ներգրավվածությամբ ագրեսիան» խորագրով հարցը:

- ՀՀ ակտիվ մասնակցել է **Եվրոպայի Խորհրդում** ընթացող աշխատանքներին: 2019թ. հունիսին ազդարարվել է ՀՀ-ԵԽ 2019-2022թթ. Գործողությունների ծրագրի մեկնարկը, որի ժամանակ նաև նշվել է Գործողությունների ծրագրի 18,9 միլիոն եվրո բյուջեի մոտ 57 տոկոսի երաշխավորման մասին ՀՀ կառավարության կողմից առաջնահերթություն հռչակված ոլորտներում, ներառյալ՝ դատաիրավական ոլորտում բարեփոխումների իրականացման համար:

-Տարբեր ծրագրերի շրջանակներում շարունակվել է փոխգործակությունը **Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության** (ՆԱՏՕ) հետ:

ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ուժերի ստորաբաժանումները շարունակել են իրենց մասնակցությունը Աֆղանստանում, Կոսովոյում, Լիբանանում և Մալիում իրականացվող խաղաղապահ գործողություններին:

- 2019թ. հոկտեմբերի 30-ից 31-ը Մոնակոյում ՀՀ ԱԳ նախարարի նախագահությամբ տեղի է ունեցել Ֆրանկոֆոնիայի 36-րդ նախարարական համաժողովը, որին Հայաստանի կողմից ներկայացվել և միաձայն ընդունվել է Գիտության, կրթության և թվային տնտեսության զարգացման գործում նորարարության ունեցած դերի վերաբերյալ բանաձև: Նիստի ավարտին 37-րդ նախարարական համաժողովի նախագահությունը հանդիսավոր արարողությամբ Հայաստանից փոխանցվել է Թունիսին: Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովում ՀՀ նախագահության շրջանակներում 2020թ. մայիսի 18-19-ին նախատեսվում էր անցկացնել Կանանց և աղջիկների դեմ բռնությունների կանխարգելմանը նվիրված համաժողով՝ ԵԽ-ՀՀ-ՖՄԿ ձևաչափով: ԱԳ նախարարությունը իրականացրել էր մի շարք նախապատրաստական աշխատանքներ այս ուղղությամբ: Սակայն, ելնելով երկրում հայտարարված արտակարգ իրավիճակից, միջոցառումը չեղարկվել է: Հայկական կողմը, որպես Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովում նախագահող երկիր, շարունակել է ՖՄԿ անդամ երկրներից հավաքել տեղեկատվություն՝ Երևանյան հռչակագրի և գագաթաժողովում ընդունված բանաձևերի կատարման ընթացքի վերաբերյալ, որի հաշվետվությունը հայկական պատվիրակությունը ներկայացրել է Ֆրանկոֆոնիայի նախարարների կոմիտեի 2020թ. նոյեմբերի 25-ին կայացած նիստին:

- Արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել **տնտեսական բաղադրիչը**: Ջանքեր են գործադրվել միջազգային տնտեսական կառույցների և ֆինանսական հաստատությունների հետ կապերի զարգացման, տարբեր պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, օտարերկրյա ներդումների խրախուսման, Հայաստանի տնտեսական և զբոսաշրջային հնարավորությունների ներկայացման ուղղությամբ: Նախաձեռնվել և անցկացվել են տարբեր պետությունների հետ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար համաժողովներ, հայկական արտադրանքի ցուցադրություններ, հատկապես օտարերկրյա գործընկերներին Հայաստանի այցեքարտ հանդիսացող ՏՏ ոլորտի ձեռքբերումները և տվյալ ոլորտում փորձի փոխանակման հնարավորությունները ներկայացնելու նպատակով:

- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները աջակցել են **խորհրդարանական դիվանագիտության** ուղղությամբ տարվող աշխատանքներին: Լրացուցիչ ջանքեր են գործադրվել մի շարք երկրների հետ **ապակենտրոնացված համագործակցության** զարգացման ուղղությամբ:

- Շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, հակահայկական քարոզչության հակազդմանը, մեր երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը: Հեղինակավոր միջազգային լրատվամիջոցներում լույս են տեսել բազմաթիվ հրապարակումներ Հայաստանի վերաբերյալ: Հանրապետության վարչապետը, նախագահը և ԱԳ նախարարը մի քանի տասնյակ ելույթներ են ունեցել աշխարհի հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում, հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ են կազմակերպվել առաջատար լրատվամիջոցների հետ:

- Արտգործնախարարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին օգնության ցուցաբերումը: 2019թ. ՀՀ քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի արտոնագրի ռեժիմ **Կատարի Պետության** և **Սերբիայի Հանրապետության** կողմից, իսկ փոխադարձության սկզբունքով՝ **Չինաստանի Ժողովրդական Հանրապետության** կողմից:

- 2020թ. ընթացքում նախարարության կողմից պատրաստվել մշակվել են միջազգային երկկողմ ու բազմակողմ պայմանագրերի շուրջ 400 նախագծեր: Ստորագրվել է 36 միջազգային պայմանագիր:

- 2019թ. դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել **Հյուսիսային Մակեդոնիայի, Դոմինիկայի Ընկերակցության, Ջիբութիի** հետ:

- Շարունակվել է միջազգային համագործակցությունը մշակութային, գիտական և կրթական ոլորտներում: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններն աշխատանքներ են ծավալել արտերկրում հայ մշակույթի հանրահռչակման ուղղությամբ:

- ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության կողմից ապահովվել է ինչպես ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների օտարերկրյա այցերի, այնպես էլ օտարերկրյա բարձրաստիճան պատվիրակությունների ՀՀ կատարած այցերի կազմակերպումը:

- 2019թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունել է **Գենդերային քաղաքականության** իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում է քայլեր իրականացնել ՄԱԿ (այդ թվում՝ ՄԱԿ-ի Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի հանձնարարականների), ԵԱՀԿ և ԵՄ շրջանակներում գենդերային հարցերի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի և ՀՀ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական պաշտոնյաների իրազեկվածության բարձրացման, ԵՄ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացման ուղղությամբ: 2020թ. նոյեմբերին ՄԱԿ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեին (CEDAW) կներկայացվի ՀՀ 7-րդ պարբերական զեկույցը:

- ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն իրականացնում է հետևյալ ամենամյա ծրագրերը. 1. «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամսյա ծրագիրը (տարեկան շրջանավարտների թիվը տատանվել է 16-ից 32-ի սահմաններում), 2011 թվականից՝ նաև 2. «Հյուպատոսական գործունեություն» մեկամսյա ծրագիրը (տարեկան մասնակիցների թիվը՝ 9-16), 2014 թվականից՝ նաև 3. «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման» երկուս և կես ամսյա ծրագիրը (տարեկան 20-24 մասնակիցներ), և 2017թ-ից՝ նաև 4. լրագրողների վերապատրաստման դասընթացը (8-12 մասնակիցներ):

Մինչև 2018թ. ներառյալ Եվրոպական Միությունը ֆինանսավորել է Դիվանագիտական դպրոցի՝ արտերկրից հրավիրվող դասախոսների, ինչպես նաև այլ ծախսեր, ընդհանուր առմամբ այդ ընթացքում ծախսելով շուրջ երկուս և կես միլիոն եվրո:

2018թ. դադարած ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերի մի մասը ստանձնել է ՀՀ կառավարությունը՝ 2019թ. ԴԴ բյուջեն ավելացնելով 50,000 եվրոյին համարժեք դրամով: Հատկացված գումարով Դպրոցը հոգում է միայն մեկ՝ Վերապատրաստման ծրագրում ներգրաված, արտերկրից հրավիրվող 5 դասախոսների ծախսերը: Տարեկան նախկին մեկ անգամի փոխարեն, 2019թ-ից այդ ծրագիրն իրականացվում է տարեկան երկու անգամ: 2020թ-ից նախատեսվել է իրականացնել նաև լրագրողների վերապատրաստման տարեկան երկու ծրագիր, սակայն կորոնավիրուսային համաճարակի տարածման հետ պայմանավորված, մարտի սկզբին տեղի է ունեցել միայն մեկ դասընթաց: Ֆինանսավորվել է նաև «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» 2020թ. ծրագիրը, որը համավարակի պատճառով ավարտվելու է 2021թ.-ին:

2020թ. մարտ ամսից, համաշխարհային համաճարակով պայմանավորված, ԴԴ մի շարք ծրագրեր անժամկետ հետաձգվեցին՝ մասնակիցների և դասախոսների անվտանգությունն ապահովելու նպատակով: Դիվանագետների վերապատրաստման հերթական

ծրագիրը տեղի ունեցավ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, իսկ հոկտեմբերից վերսկսեց «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթացը:

2019-20թթ. ժամանակահատվածում Դիվանագիտական դպրոցը վերապատրաստել է 53 դիվանագետներ և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցներ, 43 լրագրողներ և 13 դիվանագետներ՝ հյուպատոսական գործունեության ոլորտում:

Դիվանագիտական դպրոցը մինչ այսօր ունեցել է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրի (դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագրի) 220 ունկնդիրներ և 208 շրջանավարտներ, որոնցից ԱԳՆ աշխատանքի ընդունվել են 122-ը: Դպրոցի իրականացրած վերապատրաստման ծրագրերին մասնակցել են 141 դիվանագետներ և պետական այլ գերատեսչությունների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցներ, իսկ ծրագրերը հաջողությամբ ավարտել են 117-ը: Հյուպատոսական գործունեություն թեմայով վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 110 դիվանագետներ, իսկ ծրագիրը հաջողությամբ ավարտել են 35-ը:

2020թ.-ի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամսյա ծրագրի իրականացման համար Դիվանագիտական դպրոցը ֆինանսական աջակցություն է ստացել Եվրոպական միության կողմից: 2021թ-ից սկսած ՀՀ կառավարությունը ստանձնել է նաև այս ծրագրի ծախսերը:

2020թ. Դիվանագիտական դպրոցը լույս է ընծայել իր առաջին հրատարակությունը:

2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող հնգամյա միջոցառումների ցանկի՝ 2022-24թթ. ՀՀ ԱԳՆ գործունեության նպատակներն են ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացումը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացումը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին ՀՀ ներգրավվածության ավելացումը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացումը, Հայաստանի կայուն

զարգացմանն ու տնտեսության արդիականացմանն աջակցությունը, նոր շուկաներ մուտքի ապահովումը, դեպի Հայաստան ու Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացումը:

2022-24թթ. ՀՀ դիվանագիտական ծառայության գործունեության հինական նպատակները և թիրախները հետևյալն են.

•Արցախյան խնդրի խաղաղ կարգավորում՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա: Արցախի կարգավիճակի և անվտանգության ապահովում: Արցախահայության շահերի պաշտպանություն:

•Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում:

•Երկկողմ հարաբերություններ՝

- Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների զարգացում,
- ԱՄՆ-ի հետ ռազմավարական երկխոսության զարգացում, տարբեր ոլորտներում բարեկամական գործընկերության հետևողական ամրապնդում և խորացում,
- Եվրոպական երկրների հետ բարեկամական և գործընկերական հարաբերությունների խորացում և ընդլայնում: ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկում, վիզաների ազատականացման ռեժիմի հաստատման ուղղությամբ աշխատանքների ծավալում,
- ՀՀ-Հունաստան-Կիպրոս եռակողմ ձևաչափով համագործակցության զարգացում,
- **Իրանի** և **Վրաստանի** հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացում, որոնք հնարավորինս զերծ կլինեն աշխարհաքաղաքական այլ ազդեցություններից,
- **Չինաստանի** հետ բարեկամական հարաբերություններին բնորոշ բազմոլորտ լայն համագործակցության ծավալում և ընդլայնում,
- **Հնդկաստանի** և **Ճապոնիայի** հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցության զարգացում և խորացում,
- **Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում** ՀՀ ներկայության ընդլայնում,
- Փոխգործակցության ընդլայնում **Մերձավոր Արևելքի** գործընկեր երկրների հետ,
- Համագործակցության զարգացում **Ամերիկայի, Աֆրիկայի** պետությունների հետ:

- Բազմակողմ համագործակցություն՝

- ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցություն: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում,
- Եվրասիական տնտեսական միությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության արդյունավետության բարձրացում,
- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածություն; ՄԱԿ Կայուն զարգացման նպատակների ազգայնացման գործընթացի շարունակում,
- ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, անհատական գործընկերության նոր ծրագրի հաստատում և հետևողական իրագործում,
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը Հայաստանի ներգրավվածության խորացում, կառույցի ընձեռած հնարավորությունների օգտագործում:

• Ակտիվ մասնակցություն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը:

• Ակտիվ դերակատարություն ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների և մարդու իրավունքների զանգվածային խախտումների կանխարգելման ուղղությամբ գլոբալ ջանքերում:

• Աջակցություն Հայաստանի տնտեսական զարգացմանը.
- աշխատանքներ օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի, միջազգային լավագույն օրինակների և փորձառության փոխառման, հայրենական արտադրողի համար նոր շուկաների բացահայտման և արտահանման համար նպաստավոր պայմանների ձևավորման, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանման ուղղությամբ,
- միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներում տնտեսական բաղադրիչի շեշտադրում,
- Սփյուռքի գործարար ներուժի լիարժեք ներգրավում,
- միջազգային տնտեսական ինտեգրացիոն կառույցների շրջանակներում ՀՀ տնտեսական շահերի առաջմղում:

• Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն: Աջակցություն արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին:

•Հայ ժողովրդի քաղաքակրթական արժեքների և ժառանգության պաշտպանություն և հանրահռչակում: Մշակութային և գիտակրթական կապերի խորացում:

•Հայաստանում և միջազգային ասպարեզում ժողովրդավարական հաստատությունների ամրապնդում:

•Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված քայլերի իրագործում (ՄԱԿ (այդ թվում՝ ՄԱԿ-ի Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի հանձնարարականների), ԵԱՀԿ և ԵԽ շրջանակներում գենդերային հարցերի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի և ՀՀ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական պաշտոնյաների իրազեկվածության բարձրացման, ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացման ուղղությամբ քայլերի ձեռնարկում:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի նպատակները սահմանված են ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1111 որոշմամբ և Դպրոցի կանոնադրությամբ.

1) դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստումը, 2) դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով, 3) միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը, 4) այլ ուսումնական ծրագրերի իրականացումը:

Այս նպատակներից ելնելով, Դիվանագիտական դպրոցի գործունեության շարունակական թիրախներ են մնում.

- ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի՝ որպես որակյալ կրթական և վերապատրաստման ծրագրեր իրականացնող հաստատության կարողությունների ամրապնդումը,
- Դիվանագետների վերապատրաստման ծրագրերի հետագա կատարելագործումը և շարունակական իրագործումը,
- Արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների ձեռնարկումը և դրանց մասնակցությունը,

- Դիվանագիտական դպրոցի՝ որպես արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում քննարկումների հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես աշխարհում տեղի ունեցող գլոբալ և տարածաշրջանային նշանակության իրադարձությունների վերլուծության և արդի մարտահրավերների վերաբերյալ դիրքորոշումների քննարկման և ձևավորման հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի և լեզվի ուսուցման արտերկրի հեղինակավոր կենտրոնների համատեղ ջանքերով մշակված «Անգլերեն դիվանագետների համար» դասընթացի հետագա դասավանդումը և նոր ունկնդիրների ներգրավումը,
- Վերապատրաստման նոր, այդ թվում՝ օտար լեզուների դասընթացների ներդրումը,
- Վերապատրաստման, թեստավորման և քննական եղած մեթոդների և մեխանիզմների կատարելագործումը և նորերի ներդրումը,
- Դիվանագիտական դպրոցի գրադարանի համալրումը մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի գործունեությունն առնչվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից 4-րդի՝ որակյալ կրթության հետ, մասնավորապես 4.3, 4.5 և 4.7 կետերի հետ:

- **4.3.** Մինչև 2030թ. բոլոր կանանց և տղամարդկանց համար ապահովել մատչելի և որակյալ տեխնիկական, միջին-մասնագիտական և բարձրագույն, այդ թվում՝ համալսարանական կրթության հավասար հասանելիություն - Հայաստանի դիվանագիտական դպրոցում ուսումն անվճար է, ԴԴ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի քաղաքացիները,
- **4.5.** Մինչև 2030թ. վերացնել գենդերային անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովել հավասար հասանելիություն ուսման և միջին-մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում խոցելիների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տեղաբնիկ ժողովուրդների և խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների համար – Դիվանագիտական դպրոցն իր ուսումնական և վերապատրաստման ծրագրերում ապահովում է մասնակցության հավասար պայմաններ և հնարավորություններ,
- **4.7.** Մինչև 2030թ. ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլոց, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հացասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, աշխարհի քաղաքացիության,

ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցմամբ – Դիվանագիտական դպրոցի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» և դիվանագետների և այլ պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի առարկայացանկերում կան միջազգային կազմակերպությունների, դրանց կառուցվածքների, գործունեության և նպատակների մասին դասընթացներ, Դպրոցում դասավանդվում է նաև Գիտության դիվանագիտություն առարկան, որը ենթադրում է խթանել աշխարհի պետությունների միջև համագործակցությունը հանուն ընդհանուր նպատակների իրագործման: Դասընթացի ժամանակ քննարկվում են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները որպես համագործակցության ոլորտներ:

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունն իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, 2022-2024թթ. ժամանակահատվածում կիրականացնի ՀՀ վարչապետի, նախագահի, փոխվարչապետերի, ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների, կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների, նրանց ուղեկցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը: Ծառայության գործառույթների շրջանակում են նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրության իրականացումը, աշխատանքային և արարողակարգային հանդիպումների կազմակերպումը, դիվանագիտական անձնակազմի անձեռնմխելիության և արտոնությունների հետ կապված հարցերիկարգավորումը, օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ տարվող արարողակարգային աշխատանքները, դրանց ղեկավարների հավատարմագրման և պարտականությունների ստանձման գործընթացները, ինչպես նաև ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ պետական միջոցառումների (ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն) կազմակերպումն ըստ արարողակարգի: